ԻՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՈՒՐՋ

Միացյալ Նահանգների կողմից Կենտրոնական Ասիայում, Մերձավոր և Միջին Արևելքում «հակաահաբեկչական պատերազմի» համատեքստում իրագործվող գլոբալ ռազմավարությունն այս կամ այն չափով (և բովանդակությամբ) շոշափում է եվրասիական գերմայրցամաքի գրեթե բոլոր երկրների շահերը: Այդ առումով բացառություն չի կազմում նաև Հայաստանի Հանրապետությունը, որը, չնայած ներքաղաքական և հանրային կարծիքի ոլորտներում ունեցած որոշակի բարդություններին, ներքաշվել է Իրաքում ընթացող խաղաղարար և վերակառուցողական գործողությունների մեջ:

Միևնույն ժամանակ ներկայիս աշխարհաքաղաքական գործընթացների տրամաբանությունը Մերձավոր և Միջին Արևելքում ենթադրում է նոր զարգացումներ: ՀՀ-ի համար դրանցից, թերևս, ամենահրատապը ԱՄՆ-Իրան հարաբերությունների ներկան է և ապագան: Հայտնի է, որ վերջերս այդ հարաբերությունների համատեքստում՝ տեղեկատվական դաշտում հաճախ անդրադառնում են նաև ԼՂՀ հիմնախնդրի հետ կապված հարցերին:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-Իրան հարաբերությունների վերաբերյալ բաց տեղեկատվության վերլուծությունը թույլ է տալիս ամրագրել, որ առ այսօր կողմերը միմյանց նկատմամբ վարում են ավելի քան ակտիվ, որոշ դեպքերում՝ հարձակողական, բայց բոլոր պարագաներում խիստ հաշվենկատ և անգամ զգույշ քաղաքականություն: Սակայն տպավորությունն այնպիսին է, որ այդ երկու տերությունների միջև գոյություն ունեցող աշխարհայացքային (կարելի է ասել՝ աշխարհագաղափարախոսական) տարբերությունները, ինչպես նաև օբյեկտիվ բնույթ կրող աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական մրցակցությունը նպաստում են երկուստեք հակասությունների սրմանը: Դա, իր հերթին, ընդհանուր առմամբ նվազեցնում է դիվանագիտական հարթությունում խնդիրների լուծման հավանականությունը:

Այսօր ԱՄՆ-Իրան հակասությունների առարկայական դրդապատճառը Իրանի միջուկային ծրագիրն է: Համաձայն ամերիկյան պաշտոնական մոտեցման, այդ ծրագիրը երկակի նշանակության է և ունի նաև սպառազինական բաղադրիչ: Այդպիսով, համաձայն նման դիրքորոշման, այն սպառնում է ոչ միայն ԱՄՆ տարածաշրջանի դաշնակիցների, այլև Միայալ Նահանգների և մնացյալ աշխարհի անվտանգությանը:

Վերոհիշյալ խնդիրն իրավամբ դարձել է վերլուծական հանրության քննարկումների հիմնական առարկան: Ակնհայտ է, որ ԱՄՆ-Իրան հարաբերությունների հնարավոր ուժա-

յին զարգացումները կարող են ունենալ էական նշանակություն, մասնավորապես, նաև ՀՀ-ի համար: Այդ տեսանկյունից ԱՄՆ-Իրան հարաբերությունների վերաբերյալ ԶԼՄ-ում հայտնված որոշ տեղեկությունների համադրումը և դիտարկումը հրատապ են: Բացառված չէ, որ նման դիտարկումը կարող է ունենալ նաև գործնական նշանակություն ՀՀ համապատասխան պետական, քաղաքական և հասարակական կառույցների համար: Նշենք նաև, որ ներկայացված նյութում չեն քննարկվում «հեղափոխական» մեթոդների կամ էլ ազգամիջյան խլրտումների միջոցով Իրանի վարչակարգի փոփոխման տարբերակները:

Իրանի միջուկային ծրագիրը դիվանագիտական զարգացումների համատեքստում

2004թ. նոյեմբերի 14-ին Իրանը հայտարարեց, թե հրաժարվում է ուրանի հարստացման աշխատանքներից (որի համար նախատեսված էր 37 տոննա ուրան): 2004թ. նոյեմբերի 29-ին Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ)[1] խորհրդի Վիեննայում կայացած հերթական նիստում Իրանի վերաբերյալ ընդունվեց բավականին մեղմ բանաձև՝ անցած 15 ամիսների ընթացքում թվով վեցերորդը:

Բանաձևը ողջունում է Իրանի որոշումը՝ դադարեցնել ուրանի հարստացման աշխատանքները, նշում, որ այդ աշխատանքների դադարեցումը ոչ թե իրավական պարտավորություն է, այլ՝ «վստահություն ստեղծելու կամավոր միջոց»: Միաժամանակ բանաձևը քննադատում է Թեհրանին՝ ԱԷՄԳ-ի հետ ամբողջությամբ չհամագործակցելու համար և հնարավոր է համարում, որ Իրանը կարող է ունենալ «չհայտարարագրված» մի միջուկային ծրագիր, որը կարող է օգտագործվել միջուկային զենքի ստեղծման նպատակով:

Այդքանով, սակայն, հարցը փակված չէ, և լարվածությունը Իրանի միջուկային ծրագրի և հատկապես նրա հետ կապված ռազմաքաղաքական զարգացումների շուրջ չի մարել:

Նշենք, որ նոյեմբերի 29-ին ԱԷՄԳ խորհրդի (35 անդամ) նիստում ԱՄՆ ներկայացուցիչ Ջեքի Ուոլքոթ Սանդերսը *(Jackie Wolcott Sanders)* հայտարարեց, թե Վաշինգտոնը կարող է որոշում կայացնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Իրանի հարցը բարձրացնելու կապակցությամբ՝ փաստացի անտեսելով ԱԷՄԳ տնօրենների խորհրդի վերոհիշյալ բանաձևը, որը չի առաջարկում իրանական հարցը քննարկել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, և Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի ու այլ երկրների ընդդիմությունը:

[1] *International Atomic Energy Agency (IAEA):*

Ի հավելումն, 2004թ. դեկտեմբերի 12-ին իսրայելական *«The Jerusalem Post»*-ը հրապարակեց քաղաքական հարցերով ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Դուգլաս Ջ. Ֆեյթի *(Douglas J. Feith)* հարցազրույցը: Վերջինս ուղղակի նշում է, որ եթե Իրանը չհետևի Լիբիայի օրինակին և չդադարեցնի իր միջուկային ծրագիրը, ապա բացառված չէ Թեհրանի միջուկային օբյեկտների նկատմամբ ռազմական գործողության հավանականությունը[1]:

Հիշեցնենք, որ մինչ այդ՝ նոյեմբերի 18-ին, ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը *(Colin Powell)* հայտարարել էր, թե ամերիկյան հետախուզությունը տվյալներ ունի, որ Թեհրանն արդեն իսկ աշխատում է իր տրամադրության տակ եղած հրթիռների արդիականացման ուղղությամբ, որոնք ի վիճակի կլինեն կրել միջուկային մարտագլխիկներ:

Բացի այն, որ դա նոր մեղադրանք էր Իրանի հասցեին (ահաբեկչությանը սատարելուց և միջուկային ծրագրից զատ), այն նաև հստակ ուղերձ էր միջազգային հանրությանը (առաջին հերթին՝ Եվրամիությանը, Ռուսաստանին, Չինաստանին և իսլամական աշխարհին), թե Վաշինգտոնը «իրանական հարցը» համարում է չափազանց կարևոր և որ հարցը չի կարող ավարտվել միայն ուրանի հարստացման աշխատանքների դադարեցմամբ:

Ամենայն հավանականությամբ առաջիկա ժամանակահատվածում «իրանական հարցը» զարգանալու է ավելի «որոշակիացված» սցենարով:

Տեղեկատվական դաշտում հայտնված Իրանի նկատմամբ ուժի գործադրման հնարավոր սցենարները

Իրանական թեման ամերիկյան ազդեցիկ *«The Atlantic Monthly»* պարբերականի 2004թ. դեկտեմբերյան համարում կենտրոնական տեղ է գրավում: Մասնավորապես, ներկայացվել է Իրանի նկատմամբ հավանական ռազմական գործողության սկսման մի սցենար, որը քննարկվել է դիվանագիտական, ռազմական ու հետախուզական ոլորտներին պատկանող ամերիկյան մի շարք մասնագետների[2] կողմից 2004թ. սեպտեմբերին անցկացված երեքժամյա «պատերազմական խաղի» *(war game)* ժամանակ:

«Պատերազմական խաղի» մասնակիցները, ըստ էության, հիմք են ընդունել հետևյալ դրույթները.

---

[1] Նույն հարցազրույցում, ի պատասխան 2004թ. նոյեմբերին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ջեք Սթրոյի *(Jack Straw)* այն հայտարարությանը, որ եթե անգամ դիվանագիտությունն անհաջողության մատնվի, պետք է բացառել իրանական միջուկային օբյեկտների դեմ ռազմական գործողությունը, Ֆեյթը նշում է. «Ես չեմ կարծում, թե մինչ մենք դիվանագիտություն ենք բանեցնում, ինչ-որ մեկը պետք է բացառի կամ չբացառի ինչ-որ բան»:

[2] «Պատերազմական խաղի» մասնակիցների մասին տե՛ս Հավելված № 1:

- Իրանն, իր պարագայում որքան հնարավոր է արագ տեմպերով, ընթանում է միջուկային զենքի ստեղծման ուղղությամբ[1],
- գոյություն ունեն մի քանի «կարմիր գծեր» *(red line).* Իրանը կանցնի առաջին «կարմիր գիծը», երբ կարտադրի միջուկային ռումբի ստեղծման համար անհրաժեշտ բավարար քանակությամբ հարստացված ուրան (նշվում է մոտավորապես 2007թ.)։ Իրանը կանցնի հաջորդ «կարմիր գիծը», երբ նրա տրամադրության տակ եղած զանգվածային ոչնչացման զենքերը (ԶՈԶ, օրինակ՝ միջուկային մարտագլխիկներով հրթիռները) տեղակայված կլինեն այնքան շատ վայրերում, որ անհնար կլինի դրանք ոչնչացնել մեկ հարվածով (նշվում է մոտավորապես 2008թ.),
- ԱՄՆ-ը, իր հետախուզության սահմանափակվածության պատճառով, չի կարող կանխատեսել (նախօրոք գիտենալ), թե կոնկրետ երբ Իրանը կանցնի այդ «կարմիր գծերը»,
- Միացյալ Նահանգները չի կարող հանդուրժել, որ Իրանը դառնա միջուկային տերություն. հանդուրժողականության հարցն ի սկզբանե արգելվում է քննարկել «պատերազմական խաղի» ժամանակ,
- փաստորեն, Իրանի միջուկային ծրագրին վերջ տալու միակ հուսալի երաշխիք է համարվում ռազմական ուժի կիրառումն այդ երկրի դեմ՝ ռազմական հարված (կանխարգելիչ հարված) Իրանի միջուկային, քիմիական, կենսաբանական և հրթիռային ծրագրերում ընդգրկված օբյեկտներին,
- չի բացառվում, որ Իրանն ինքը կարող է կանխարգելիչ հարված հասցնել Մերձավոր Արևելքում տեղակայված ամերիկյան ուժերին, ազդեցության կետերին և Միացյալ Նահանգների դաշնակիցներին (նշվում է հատկապես Իսրայելի անունը),
- վերոհիշյալով հանդերձ եզրակացվում է, որ Իրանը կարող է ստեղծել միջուկային զենք առաջիկա երկու-երեք տարիների ընթացքում[2] և, հետևաբար, ժամանակը չի աշխատում ԱՄՆ օգտին։

---

[1] Ինչ վերաբերում է Իրանի միջուկային ծրագրին, ապա նշվում է, որ, օրինակ, 2004թ. օգոստոսի 10-ին Ռուսաստանը հայտարարել է, թե Բուշերի ատոմային էլեկտրակայանի (ԱԷԿ) շինարարությունը 90%-ով ավարտված է։ Անհրաժեշտ սարքավորումները մատակարարվել են։ Աշխատանքների լիակատար ավարտի համար անհրաժեշտ է սարքավորումների հավաքում, համակարգերի միակցում և գործառնությունների նախապատրաստում։

[2] Այստեղ հարկ է նշել, որ մի շարք դիտարկումների համաձայն, Իրանը կարող է միջուկային զենքի ստեղծման համար անհրաժեշտ քանակությամբ ուրան արտադրել արդեն իսկ 2005թ. վերջին (օրինակ, նման հայտարարություն արեց ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ջոն Բոլթոնը *(John Bolton)* 2004թ. Օգոստոսի 17-ին Հուդզոն ինստիտուտում *(Hudson Institute):* Իսկ 2003թ. Յուրի Բալուևսկին *(Юрий Балуевский*), որն այդ ժամանակ Ռուսաստանի Գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալն էր, հայտարարեց, թե իր կարծիքով՝ Իրանն ունի մարտավարական միջուկային զենք։ 2004թ. հոկտեմբերի 9-ին ռուսական *«Известия»*-ն արտատպեց գերմանական *«Suddeutsche Zeitung»* («Զյուդդոյչե ցայտունգ») պարբերականին Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերի *(Gerhard Schroeder)* տված հարցազրույցը։ Թղթակցի այն հարցին, թե ԱՄՆ հատուկ ծառայությունները նշում են,

Հնարավոր ռազմական գործողությունների սցենարները

Հավանական ռազմական գործողության[1] սցենարն ունի զարգացումների երեք մակարդակ.

- պատժիչ հարձակում Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) զորամիավորումների դեմ. գործողությունը գնահատվում է որպես ցածր ռիսկային,
- կանխարգելիչ օդային հարվածներ Իրանի միջուկային օբյեկտների նկատմամբ. գործողությունը գնահատվում է որպես ցածր ռիսկային,
- վարչակարգի փոփոխություն Իրանում՝ «ուժի միջոցով մոլլաների կառավարության տապալումը Թեհրանում». գործողությունը գնահատվում է որպես չափավոր ռիսկային։

Առաջին մակարդակի դեպքում նախատեսվում է «Սթելս» *(«Stealth [Global Power]»)* «անտեսանելի» ինքնաթիռների, ԱՄՆ-ում տեղակայված «*B-2*» ծանր ռմբակոծիչների և թևավոր հրթիռների («*cruise missile*») միջոցով հարվածներ հասցնել ԻՀՊԿ զորամիավորումներին, որոնք, ըստ էության, համարվում են իրանական զինված ուժերի ամենամարտունակ հատվածը։ Նշվում են կոնկրետ թիրախների անվանումները[2]՝ Թեհրանում տեղակայված ԻՀՊԿ Առաջին զրահատանկային դիվիզիան և Առաջին հետևակային դիվիզիան, Սպահանում գտնվող ԻՀՊԿ Առաջին ինժեներական դիվիզիան, Դզֆել բնակավայրում տեղակայված ԻՀՊԿ Երկրորդ զրահատանկային դիվիզիան և Խորամաբադում գտնվող ԻՀՊԿ Երկրորդ հետևակային դիվիզիան։

Նախատեսվում է այդ գործողություններն իրականացնել մեկ գիշերվա ընթացքում։ Գործողության նպատակն է ոչնչացնել այն ուժերը, որոնք կարող են խանգարել վարչակարգի փոփոխության ժամանակ իրականացվող ցամաքային գործողությանը կամ ռազմական գործողությունների սկսվելուց հետո լուրջ խնդիրներ առաջացնել Իրաքում։

որ Իրանն արդեն իսկ ունի միջուկային զենք, Շրյոդերը պատասխանում է. «Եկեք սպասենք ԱԷՄԳ, որը հետևում է իրավիճակին, տնօրենների խորհրդի [2004թ.] հոկտեմբերյան հաշվետվությանը։ Ես ելնում եմ նրանից, որ Իրանը բավականին ողջախոհ է և չի ցանկանում միջազգային լարվածության պատճառ դառնալ»՝ փաստորեն չհերքելով այդ տեղեկությունը։

[1] «Պատերազմական խաղի» մասնակիցները Իրանի նկատմամբ հավանական ռազմական գործողության սցենարին տվել են «Ռազմավարական անակնկալ» *(Strategic surprise)* անվանումը։

[2] Ըստ սցենարի, Միացյալ Նահանգները տիրապետում է այն տեղեկությանը, թե կոնկրետ որտեղ են գտնվում ԻՀՊԿ զորամիավորումները։

Սցենարի երկրորդ մակարդակով նախատեսված է կանխարգելիչ օդային հարվածներ հասցնել Իրանի տարածքում գտնվող մոտավորապես 300 օբյեկտներին[1], որոնցից 125-ը հանդիսանում են միջուկային, քիմիական, կենսաբանական (ենթադրելի է նաև հրթիռային) կարողությունների արտադրության և պահպանության համար նախատեսված օբյեկտներ[2], ինչպես նաև հրթիռների արձակման համակարգեր: Մնացածը իրանական հակաօդային պաշտպանության և հրամանատարական այլ կարգի կետեր են: Օդային ռմբակոծություններ-ի համար հատկացվում է մոտավորապես հինգ օր: Ըստ էության, գործողությունը սկսվելու է առաջին մակարդակի մեկնարկի հետ միաժամանակ:

Գործողությունը նախատեսվում է սկսել հակաօդային պաշտպանության համակարգերի վրա հարձակումով: Գործողության ժամանակ կիրառվելու են «Սթելս» «անտեսանելի» ինքնաթիռներ, թևավոր հրթիռներ, ցամաքում և ավիակիրների վրա տեղակայված մարտավարական ավիացիա, ինչպես նաև ձեռնարկվելու են ցամաքային հատուկ գործողություններ: Հատուկ ընդգծվում է, որ «ցածր ռիսկային» գնահատականը վերաբերում է գործողության զուտ ռազմական մասին. հաշվի չի առնվում քաղաքական գործոնը:

Գործողության նպատակն է ոչնչացնել Իրանի միջուկային, քիմիական, կենսաբանական, հրթիռային կարողությունները կամ էական հարված հասցնել դրանց:

Եվ վերջապես, վարչակարգի փոփոխության մասը: Սցենարի համաձայն, անցկացվելու է կրակային նախապատրաստություն՝ օդային ավանդական հարվածներ, որից հետո կիրառվելու են ցամաքային հատուկ նշանակության գործողություններ («ոչ ավանդական ռազմական գործողություններ» *(«unconventional warfare»):* Օգտագործվելու են ցամաքային ուժեր, կիրառվելու են «ներազդման գործողություններ», օժանդակություն է ցուցաբերվելու Իրանի ներսում գործող ընդդիմադիր խմբերին:

Նախագծի համաձայն, ցամաքային գործողության հիմնական հարվածը (մոտ երեք դիվիզիա) հասցվելու է Իրաքից: Աֆղանստանի և Ադրբեջանի տարածքներից[3] անցկացվելու են հատուկ գործողություններ, Ադրբեջանից Իրան են նետվելու նաև օդադեսանտային ուժեր: Հարավից՝ Պարսից ծոցի կողմից (մոտավորապես Բենդեր Աբաս քաղաքի շրջանում) իրականացվելու է շեղող գործողություն, որը պետք է ստեղծի հիմնական հարվածի տպավորություն[4]:

---

[1] 300-ից մոտավորապես 20 օբյեկտների ոչնչացման համար անհրաժեշտ են, այսպես կոչված, ներթափանցող ռումբեր, այսինքն՝ այդ օբյեկտները գտնվում են գետնի տակ:

[2] Դրանց շարքում նշվում է 10 գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական կենտրոնների մասին:

[3] Նախատեսվում է Ադրբեջանից Իրանին հարված հասցնել. սկսել հատուկ գործողություն՝ մեկ բրիգադով: Աֆղանստանից հարվածող զորամիավորման ձևաչափը նշված չէ:

[4] Հարավից հարվածող զորամիավորման ձևաչափը նշված չէ:

Իրաքի (ենթադրելի է նաև Աֆղանստանի ու Ադրբեջանի) տարածքից, ինչպես նաև ծովից պետք է հասցվեն օդային հարվածներ՝ ռազմական ինքնաթիռներ, թևավոր հրթիռներ: Նախատեսվում է գործողության սկսվելուց մոտ երկու շաբաթ անց հասնել Թեհրանին: Նշվում է, որ ճակատամարտ մայրաքաղաքի համար չի լինելու: Ամերիկյան ուժերը շրջապակելու են Թեհրանը, և ԿՀՎ հատուկ նշանակության ուժերն առանձին գործողություններ են իրականացնելու քաղաքում:

Հատուկ ընդգծվում է, որ Իրանում անցկացվելու են միջուկային կարողությունների ոչնչացում, վարչակարգի փոփոխություն և նահանջ: Կայունացման գործողություններ (ինչպես, օրինակ, Իրաքում) ընդհանրապես չեն իրականացվելու: Իրանում վարչակարգի փոփոխության իրականացման համար հատկացվում է մոտավորապես երեսուն օր:

Հավանական ռազմական գործողության սցենարը նախատեսում է քսան օրում Միացյալ Նահանգների զինուժի նախապատրաստում և խմբավորման ստեղծում: Խմբավորման ստեղծումն ընթանալու է Իրաքում գտնվող զորամիավորումների փոփոխման (մեկնում-ժամանում) տեսքով: Նույն քսան օրվա մեջ նախատեսվում է Իրանում սկսել «ժողովրդական ապստամբություն»: Այնուհետև հաջորդելու են օդային հարվածները՝ մեկ գիշեր ԻՀՊԿ զորամիավորումների ոչնչացման և մոտ հինգ օր Իրանի միջուկային, քիմիական, կենսաբանական, հրթիռային կարողությունները շարքից հանելու համար: Ռազմական գործողության սցենարը եզրափակում է վարչակարգի փոփոխությունը, որի իրականացումը տևելու է մոտ երեսուն օր՝ *ներառյալ* ԻՀՊԿ զորամիավորումների ոչնչացման համար նախատեսված մեկ գիշերը և Իրանի միջուկային, քիմիական, կենսաբանական, հրթիռային կարողությունները շարքից հանելու համար նախատեսված հինգ օրը: *Իրանի նկատմամբ ռազմական հավանական գործողության նախապատրաստումը և անցկացումը տևելու է ընդամենը հիսուն օր*[1]:

Հավանական ռազմական գործողության իրականացման համար սցենարով նախատեսվում է, որ ԱՄՆ պաշտպանության նախարարը լիազորելու է Իրանի տարածքում իրագործել հատուկ նշանակության գործողություններ, որոնց նպատակն է իրանական միջուկային ու պաշտպանական կարողություններին կանխարգելիչ հարվածներ հասցնելու համար՝ հետախուզական տվյալների հավաքագրումը:

ԱՄՆ պաշտպանության նախարարությունը առաջիկա վեց ամիսների ընթացքում նախագծելու է Իրանի դեմ հավանական ռազմական գործողության ծրագիր, որի նպա-

[1] Ռազմական գործողության սցենարի վերաբերյալ տե՛ս նաև Հավելված № 2:

տակն է ԱՄՆ նախագահի համար ապահովել Իրանի նկատմամբ ռազմական գործողության *ընտրությունը։* Ծրագիրը կենտրոնանալու է հետևյալ դրույթների վրա.

- ԻՀՊԿ զորամիավորումներին հարված հասցնելը,
- ՋՈՋ արտադրության Իրանի կարողություններին և ՋՈՋ-ի հետ առնչվող իրանական սարքավորումներին էական վնաս հասցնելը,
- իրանական վարչակարգի փոփոխությունը,
- Իրանում կայունացման *սահմանափակ* գործողությունների անցկացումը։

Հարաբերությունները Իրաքի, Ադրբեջանի և Վրաստանի հետ

ԱՄՆ պաշտպանության նախարարը, ԱՄՆ պետքարտուղարի հետ *համագործակցելով* և Իրաքի կառավարության հետ *խորհրդակցելով,* իրականացնելու է հետևյալ միջոցառումները.

- լիազորել Իրաքում *մատակարարումների մակարդակների* հիմնումը, որոնք կարող են օգտագործվել «համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարին օժանդակություն ցույց տալու» նպատակով,
- լիազորել Իրաքի տարածքում լրացուցիչ կառույցների շինարարությունը, որոնց նպատակն է հիմնել փաստացի նոր օդանավակայաններ (իրենց կարողություններով)՝ Իրաքի տարածքային ամբողջականության պահպանման համար։

ԱՄՆ պաշտպանության նախարարը, համակարգելով իր ջանքերը ԱՄՆ պետքարտուղարի հետ, Ադրբեջանի հետ բանակցություններ է սկսում հետևյալ կետերի շուրջ.

- Ադրբեջան ամերիկյան մատակարարումների նախնական սկզբնավորում, ինչը կարող է օգնել համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարին,
- ադրբեջանական օդանավակայանների կարողությունների ընդլայնում, որը համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարում ամերիկյան զինուժի համար կմեծացնի ընտրություն կատարելու հնարավորությունը,
- Լեռնային Ղարաբաղի հարցի հետ կապված՝ Ադրբեջանին ամերիկյան սահմանափակ օժանդակության առաջարկում։

ԱՄՆ պաշտպանության նախարարը, համակարգելով իր ջանքերը ԱՄՆ պետքարտուղարի հետ, Վրաստանի հետ բանակցություններ է սկսում հետևյալ կետերի շուրջ.

- կազմակերպել ամերիկյան մատակարարումները Վրաստան, ինչը կարող է օգնել համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարին,

- վրացական օդանավակայանների կարողությունների ընդլայնում, ինչը համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարում ամերիկյան զինուժի համար կմեծացնի ընտրություն կատարելու հնարավորությունը[1]:

Ծրագրի ֆինանսավորումը

Մոտ 30 գործողություններ պարունակող սցենարը, ըստ «պատերազմական խաղի» մասնակիցների, կարժենա շուրջ $700 մլն, որի ձեռքբերման ուղղությամբ առաջարկվում է իրագործել հետևյալ կետերը.

- գումարի մի որոշ մասը կարելի է ստանալ Իրաքում և Աֆղանստանում ընթացող հակաահաբեկչական պատերազմի ֆինանսավորումից,
- գումարի մի որոշ մասը կարելի է վերցնել այլ հատկացումներից (կոնկրետ աղբյուր նշված չէ),
- ենթադրվում է անվտանգության պահպանման նպատակով ֆինանսավորման համար ոչ մի պաշտոնական հայց չներկայացնել ԱՄՆ Կոնգրեսին[2]:

Նաև հատուկ նշվում է, որ գործողությունը սկսելու դեպքում գումարներ կպահանջվեն (ըստ ամենայնի, արդեն բացահայտ կերպով՝ Կոնգրեսից), սակայն այդ դեպքում գումարի կոնկրետ չափը չի նշվում:

Տեղեկատվական գործողությունները

Ծրագրի համաձայն, Միացյալ Նահանգները պետք է ապահովի ռազմական գործողությունը հավանության արժանացնող տեղեկատվական ֆոնի (ամերիկյան և միջազգային) ձևավորումը: Տեղեկատվական գործողությունների ռազմավարական հիմնական դրույթները հետևյալն են՝

1. Միացյալ Նահանգները պետք է հարձակողական պայքար մղի ահաբեկչության դեմ:

---

[1] Տե՛ս Հավելված № 3:

[2] Նախագիծը բավականին ուշագրավ մեխանիզմ է ներկայացնում վերոհիշյալ $700 մլն-ն ձեռք բերելու համար: Նախագծի համաձայն, չի բացառվում, որ իրանական հարցի վերաբերյալ վերջնական եզրակացության գալու պարագայում ԱՄՆ նախագահը պահանջի ռազմական գործողություններ սկսել իսլամական հանրապետության դեմ, ուստի արդեն իսկ այդ պահին պետք է պատրաստ լինեն ռազմական ենթակառուցվածքները: Դա նշանակում է, որ, օրինակ, Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարությանը պետք է հանձնարարվի ընդլայնել Ադրբեջանում առկա օդանավակայանների (ռազմական և քաղաքացիական) կարողությունները և ողջ նախապատրաստական աշխատանքների համար հատկացնել $700 մլն: Նշվում է, որ $700 մլն-ն այն գումարն է, որ 2002թ. հուլիսին գեներալ Թոմի Ֆրենքսը *(Tomy Franks)* պահանջեց «Իրաքի նկատմամբ պատերազմի հավանականությունը բաց պահելու համար»:

2.«Մենք (ԱՄՆ) չենք կարող սպասել, մինչև հարձակման կենթարկվենք»։

Վերոհիշյալ ռազմավարությունը ենթադրում է հետևյալ մարտավարական կետերը՝

- Իրանը զարգացնում է ՋՈՋ,
- Իրանը չի հարգում իր պայմանագրային պարտավորությունները,
- Իրանն ակտիվորեն ներգրավված է ահաբեկչության մեջ,
- Իրանը ձգտում է կործանել ժողովրդավարությունն Իրաքում,
- Իրանը վտանգ է ներկայացնում տարածաշրջանի համար,
- Իրանի բնակչության մեծ մասը ցանկանում է ազատվել այնտեղ առկա բռնապետական վարչակարգից։

Տեղեկատվական գործողությունների համար նախատեսվում է գործառնական հետևյալ համակարգը. Սպիտակ տան որևիցե պաշտոնյա պետք է պատասխանատվություն կրի տեղեկատվական գործողությունների համար և պարտավորվի՝

- կոորդինացնել տեղեկատվական գործողությունների անցումը մարտավարական մակարդակից ռազմավարական մակարդակ,
- կոորդինացնել բացահայտ և գաղտնի տեղեկատվական գործողությունները՝ հասարակական հարաբերությունները, ժողովրդական դիվանագիտությունը և տեղեկատվական գործողությունները,
- ծրագրավորել տեղեկատվական գործողությունները՝ հաշվի առնելով ռազմական գործողությունների ընթացքը։

Որպես վերոհիշյալ գործառնական համակարգի լսարան են հանդես գալու հետևյալ միավորները՝

- Միացյալ Նահանգների հասարակությունը,
- Իրանի ժողովուրդը,
- Մերձավոր Արևելքը,
- Եվրոպան,
- մնացյալ աշխարհը։

Տեղեկատվական գործողությունների մեթոդաբանությունը հետևյալն է.

- *ռազմավարական առումով* Իրանի նկատմամբ տարվող քննադատությունը պետք է ավելի արագ կատարվի, քան այդ քննադատության դեմ կբերվեն հակափաստարկներ,

- *մարտավարական առումով* Միացյալ Նահանգները պետք է գերակշռող դիրք գրավի տեղեկատվական հոսքերի 24-ժամյա շրջափուլում, բայց և միաժամանակ պետք է ձգտի չեզոքացնել հնարավոր այլոց հաջողություններն այդ ոլորտում:

Տեղեկատվական գործողությունները բաղկացած են երեք փուլերից.

1. հիմնավորման ստեղծում, համաձայն որի՝ *Իրանը վատն է, սակայն դիվանագիտությունը հանդիսանում է խնդրի կարգավորման լավագույն միջոցը*,
2. ամերիկյան մոտեցումներին տրվող օժանդակության ընդլայնում ոչ միայն Միացյալ Նահանգներում, այլ նաև արտերկրում, քանի որ առկա խնդիրը չի առնչվում սոսկ Միացյալ Նահանգներին,
3. «պահը» հասունացել է, քանի որ դիվանագիտությունն անհաջողության է մատնվել, և Միացյալ Նահանգներն այլ ընտրություն չունեն[1]:

Ժամանակի կարգավորում՝ պետք է ընթանա տեղեկատվական և ռազմական գործողությունների համաժամանակյա կոորդինացիա:

Իսրայելական գործոնը

Սցենարում իսրայելական գործոնը դիտարկվում է որպես «Ռազմավարական անակնկալ», ըստ էության՝ այլընտրանքային տարբերակ: Շեշտը դրվում է իսրայելական օդուժի հարվածների վրա: Ընդ որում, նշվում է, թե իսրայելական օդուժը խնդիր ունի հասնել մինչև Իրան: Ռազմաքաղաքական առումով դա նշանակում է Հորդանանի, Սաուդյան Արաբիայի և անգամ Թուրքիայի օդային տարածքները խախտելու քաղաքական խնդիրներ:

Միևնույն ժամանակ, տեխնիկական առումով, իսրայելական օդուժը խնդիրներ չունի: 1998թ. սկսած Թել Ավիվը ԱՄՆ-ից ստացել է 25 հատ *F-15I Ra´am (ra´am-* եբր.՝ կարկուտ) տեսակի մարտական իքնաթիռներ, որոնք կարող են հարվածներ հասցնել և հետ վերադառնալ (առանց վերալիցքավորման) 2 225 կմ շառավիղով, իսկ 2004թ. փետրվարի 19-ից Իսրայելը ստանում է *F-16I Sufa (sufa-* եբր.՝ կայծակ) ռմբակոծիչ-կործանիչներ (ընդհանուր առմամբ պետք է ստանա 102 հատ), որոնց գործողության շառավիղը (առանց վերալիցքավորման) 2 100 կմ է: Նշենք, որ Թել Ավիվից մինչև Բուշեր 1 600 կմ է, իսկ մինչև Թեհրան՝ մոտ 1 700 կմ:

[1] Տե՛ս նաև Հավելված № 4:

2004թ. սեպտեմբերի 21-ին հայտնի դարձավ, որ Միացյալ Նահանգները ծրագրել է Իսրայելին վաճառել $319 մլն արժողության մոտ 5 000 հատ նոր տեսակի (թիրախն ինքնուրույն գտնող) ռումբեր, որոնց մեջ առանձնացվում էին 500 հատ *BLU-109* տեսակի հակաբունկերային ռումբեր, որոնք կարող են քանդել մոտ 4 մետր հաստության երկաթբետոնե ամրություններ:

2004թ. սեպտեմբերի 6-ին հայտնի դարձավ, որ Իսրայելը անհաջողության է մատնվել իր *Ofek-6 (ofek-* եբր.՝ հորիզոն) անվամբ հետախուզական արբանյակը Երկրի ուղեծիր արձակելու գործում: Խնդիր առաջացավ արբանյակը կրող հրթիռի հետ, որն ընկավ Միջերկրական ծովը: Պաշտոնական Թել Ավիվը հայտարարեց, թե առաջիկա մի քանի ամիսներին կրկին փորձ է արվելու *Ofek-6*-ը դուրս հանել Երկրի ուղեծիր:

1988թ. սկսած Միացյալ Նահանգները Իսրայելին տրամադրել է մոտ $1 մլրդ-ի դրամաշնորհ՝ սեփական հակահրթիռային պաշտպանության *Arrow (arrow-* անգլ.՝ նետ) հրթիռի (համակարգ) պատրաստման աշխատանքների համար: 2004թ. հուլիսի դրությամբ Իսրայելն արդեն իսկ ուներ *Arrow* հրթիռների երկու դիվիզիոն՝ Էյն Շեմերում և Փալմահիմում: 2004թ. ԱՄՆ բյուջեով նախատեսված էր Իսրայելին *Arrow*-ի համար հատկացնել $133 մլն, Թել Ավիվը ծրագրում է ունենալ նաև երրորդ դիվիզիոնը:

Իրանական կողմին պատկանող հրթիռների (Shahab-3, Shahab-4, C-400) գործոնը

Որպես հիմնական սպառնալիք դիտարկվում է իրանական *Shahab-3* հրթիռը: Նշենք, որ *Shahab-3*-ը իրանական զինված ուժերում կիրառվում է 1999-ից: Ի սկզբանե նշվում էր, որ նրա հարվածային հեռավորությունը 1 300 կմ է, սակայն այս տարվա օգոստոսի 11-ին և հոկտեմբերի 20-ին կայացած փորձարկումներից հետո իրանական պաշտոնյաները հայտարարեցին, թե նոր *Shahab-3*-ի (փաստացի՝ *Shahab-4*) հեռավորությունը կազմում է մոտ 2 000 կմ, այսինքն՝ այն կարող է հասնել Իսրայելին և տարածաշրջանում գտնվող ամերիկյան ռազմակայաններին: Այս առիթով տեղին է վերհիշել Քոլին Փաուելի նոյեմբերի 18-ի հայտարարությունը, թե Թեհրանն աշխատում է սեփական հրթիռների արդիականացման ուղղությամբ, որոնք ի վիճակի կլինեն կրելու միջուկային մարտագլխիկներ[1]:

[1] Ըստ սցենարի, իրանական հրթիռների դեմ նախատեսվում է կիրառել հակահրթիռային պաշտպանության համակարգեր, մասնավորապես՝ ամերիկյան *THAAD (The Terminal High Altitude Area Defense)* համակարգերը, որոնց 150 կմ բարձրությամբ և 200 կմ շառավղով կարող են ոչնչացնել հակառակորդի կարճ և միջին հեռահարության բալիստիկ հրթիռները: Սակայն այստեղ հարկ է նշել, որ ըստ նույն ամերիկյան (բաց) աղբյուրների, *THAAD* համակարգերը պատրաստ կլինեն միայն 2008-2009թթ.:

Կարևոր խնդիր են համարվում *ռուսական C-400* հակաօդային պաշտպանության համակարգերը, որոնք կարող են 400 կմ շառավղով ոչնչացնել հակառակորդի ինքնաթիռները, մոտ և միջին հեռահարության հրթիռները, և նույն ամերիկյան փորձագետների կարծիքով՝ համարվում են իրենց տեսակի մեջ աշխարհում ամենահաջողներից մեկը, եթե ոչ՝ ամենահաջողը: Նշենք, որ *C-400*-ի փորձարկումներն ավարտվեցին 2004թ. փետրվարին, իսկ ավելի վաղ՝ 2003թ. սեպտեմբերին հայտնի դարձավ, որ Իրանը ծրագրում է գնել ռուսական *C-400* հակաօդային պաշտպանության համակարգերը:

Ադրբեջանի գործոնը

«Ռազմավարական անակնկալի» հեղինակները հատուկ տեղ են հատկացնում Ադրբեջանին: Փաստորեն, ԱՄՆ մերձավորարևելյան գործողությունների համա-կարգման մեջ Ադրբեջանը հանդես է գալիս որպես նոր, լիարժեք գործոն՝ ի շարս Օմանի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Կատարի, Բահրեյնի, Քուվեյթի, Իրաքի և Իսրայելի:

Սցենարի համաձայն, ադրբեջանական մի շարք օդանավակայաններ օգտագործվելու են ամերիկյան *C-5, C-17 և C-130* տրանսպորտային ինքնաթիռների կողմից[1]: Թերևս, «Ռազմավարական անակնկալի» իրականացման դեպքում հավանական է, որ այդ օդանավակայաններում տեղակայվեն նաև *F-15* և *F-16* ռմբակոծիչներ:

2004թ. սեպտեմբերից սկսեցին տեղեկություններ հայտնվել, թե իր Ազգային հակահրթիռային պաշտպանության *(National Missile Defense)* ծրագրի[2] շրջանակներում Միացյալ Նահանգները պատրաստվում է Ադրբեջանում կամ Կասպից ծովի ադրբեջանական հատվածում տեղակայել հակահրթիռային համակարգ (Կասպիցի պարագայում խոսք էր գնում հակահրթիռային լողացող համակարգի մասին): Ենթադրվում է, որ Ադրբեջանում կարող են տեղակայվել վերոհիշյալ *THAAD* համակարգերը:

Ըստ ամերիկյան *UPI* գործակալության, 2004թ. հոկտեմբերին Վաշինգտոնի և Բաքվի միջև բանակցություններ են ընթացել ԼՂՀ վերահսկողության տակ գտնվող Զանգելանի, Ջեբրայիլի և Ֆիզուլիի տարածքներում ամերիկյան ռազմակայանների ստեղծման ուղղությամբ:

Հետևություններ

ԱՄՆ դաշնակիցների և Իրանի միջև հնարավոր ռազմական գործողությունների հավանական սցենարները վերջին տարիներին բազմիցս արծարծվել են տեղեկատվական

[1] Տե՛ս Հավելված № 5:

[2] ԱՄՆ «Ազգային հակահրթիռային պաշտպանություն» ծրագիրն ընդունված է կոչել նաև «Աստղային պատերազմների որդի» *(Son of Star Wars)* անվամբ:

դաշտում: Սակայն *«The Atlantic Monthly»* պարբերականի հրապարակումը (որը, թերևս, իրականացվել է ԱՄՆ համապատասխան պետական կառույցների նախաձեռնությամբ կամ նվազագույնը՝ համաձայնությամբ), առայժմ ամենամասնագիտականն է և ամենից համապարփակը: Դատելով այդ հրապարակման մեջ ներկայացված տեղեկատվական գործողությունների ռազմավարությունից՝ կարելի է կարծել, որ նման «պատերազմական խաղի» վերաբերյալ տեղեկության արտահոսքն արդեն իսկ հանդիսանում է Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի կողմից վարվող «տեղեկատվական պատերազմի» մի դրվագ: Նկատենք, որ նման տեղեկատվական գործողությունները համեմվում են ամերիկյան օդուժի կողմից Իրանի սահմանների խախտման մասին հաղորդագրություններով:

Վերադառնալով հարցի էությանը՝ պետք է ամրագրել, որ ԱՄՆ-ը ունի բավարար կարողություններ, որպեսզի Իրանին ռազմական հարված հասցնի և այդ առումով զարգացման նման սցենարը բացառել չի կարելի:

Սակայն հաշվի առնելով ներկայումս Իրաքում տիրող իրավիճակը՝ Վաշինգտոնի համար Իրանի ցամաքային օկուպացիան[1] ավելի քան լուրջ խնդիր է, քանի որ երկու ճակատով գործելու համար բացակայում են անհրաժեշտ ռազմատեխնիկական և ֆինանսական կարողությունները[2]: Սա նշանակում է, որ ԱՄՆ-ի կողմից պրագմատիկ մոտեցման պարագայում Իրանի դեմ ռազմական գործողությունը առնվազն ենթադրում է իրադրության շտկում Իրաքում: Իսկ դա, ինչպես վկայում են մասնավորապես Միացյալ Նահանգների Կենտրոնական հետախուզական վարչության զեկույցները, առայժմ ապագայի խնդիր է:

Սակայն ամենաէական հանգամանքն այն է, որ, ի տարբերություն Իրաքի, այսօր Իրանը տիրապետում է բավարար ռազմատեխնիկական կարողությունների Մերձավոր Արևելքում գտնվող ամերիկյան ռազմակայաններին և Իսրայելին հարվածներ հասցնելու համար: Ըստ ամերիկյան տվյալների, ներկայումս իրանական ԶՈւ տրամադրության ներքո են գտնվում մոտ 550 *Shahab* տեսակի հրթիռներ, որոնց շուրջ 5-10%-ի հեռահարությունը հասնում է 1 300 կմ-ի:

Բացի այդ, ամերիկյան աղբյուրների համաձայն, բավականին բարդ է ճշգրտությամբ պարզել իրանական ԶՈԶ-ի հետ առնչվող օբյեկտների և հրթիռային բոլոր կայանների

[1] Ըստ ամերիկյան աղբյուրների գնահատման, միայն Իրանի տարածքի նկատմամբ անմիջական կամ միջնորդավորված վերահսկողության հաստատման պայմաններում է հնարավոր կանխել Իրանի կողմից ԶՈԶ ստեղծումը, հետևաբար՝ ռազմական հարվածն Իրանին, առանց վերջինիս տարածքի նկատմամբ վերահսկողության հաստատման, չի կարող հարցի լուծում համարվել:

[2] ԱՄՆ-ը լուրջ խնդիրներ ունի Իրաքում իրավիճակը կայունացնելու ուղղությամբ, հետևաբար՝ լրացուցիչ իրանական ծանրաբեռնվածությունը կարող է միայն վատացնել իրավիճակը:

տեղակայման վայրերը[1], ուստի պատասխան հարվածը հավանական է: Այս տեսանկյունից բնորոշ է 2004թ. դեկտեմբերի 28-ին Իրանի Քում քաղաքի համալսարանում ունեցած ելույթի ժամանակ իրանական բանակի գեներալ Քասեմ Շաբանիի *(Qassem Shabani)* այն հայտարարությունը, թե Իրանն արտադրում է ավելի շատ զենք ու «ձեռք է բերել միջուկային կարողություններ» և ԱՄՆ-ի դեմ պատերազմի պարագայում Թեհրանը կդիմի *ասիմետրիկ* քայլերի: Այդ, ինչպես նաև իրանական պաշտոնական այլ անձանց նմանատիպ հայտարարությունները վկայում են նվազագույնը այն մասին, որ իրանական կողմն ընդունել է «տեղեկատվական պատերազմի» կանոնները և իր կողմից կիրառում է պատասխան հոգեբանական ճնշման հնարքներ:

Սակայն չի կարելի նաև լիովին բացառել հետևյալ տարբերակը. Իրանը դեռ ձեռք չի բերել «միջուկային տերության» լիիրավ կարգավիճակ և դեռևս չունի այդ կարգավիճակին համապատասխան ենթակառուցվածքների համակարգ (ինչպիսին առկա է, օրինակ, Իսրայելում), սակայն արդեն իսկ ստեղծել է սահմանափակ թվով միջուկային մարտագլխիկներ, որոնք թույլ կտան Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին ծայրահեղ իրադրություններում կատարել «հատուցման» պատասխան հարվածներ:

[1] Այդ խնդրի հրատապության մասին է վկայում ամերիկյան լրագրող Սեյմուր Մ. Հերշի (*Seymour M. Hersh*) աղմուկ հանած հոդվածը այն մասին թե ԱՄՆ զինուժի հատուկ նշանակության զինածմբերն արդեն իսկ գտնվում են Իրանի տարածքում և նրանց առաջադրանքն է ճշտել նման օբյեկտների և կայանների տեղակայման վայրերը (տե՛ս *Seymour M. Hersh, «The coming wars», The New Yorker, Issue of 2005-01-24 and 31*):

Հավելված № 1

«Պատերազմական խաղի» մասնակիցները

Սեմ Գարդիներ (*Sam Gardiner*)՝ ԱՄՆ օդուժի պաշտոնաթող գնդապետ: «Պատերազմական խաղում» հանդես է գալիս որպես ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական: Ավելի քան երկու տասնամյակ Սեմ Գարդիները ԱՄՆ Ազգային ռազմական քոլեջում (*National War College*) իրականացրել է նմանատիպ «պատերազմական խաղեր»: 1989թ. սկսած՝ 1991թ. Ծոցի պատերազմից երկու և 2003թ. Իրաքի պատերազմից[1] տասնչորս տարի առաջ, Գարդիները հեղինակել է առնվազն հիսուն «պատերազմական խաղեր», որոնք ներառում էին հարձակումը Իրաքի վրա: «Թեթև ուժերի ռազմավարությունը», որն ամերիկյան գեներալ Թոմի Ֆրենքսը (*Tommy Franks*) օգտագործեց 2003թ. Բաղդադը գրավելիս, 1980-ական թթ. առաջին անգամ մշակվել է Գարդիների նախագծած «պատերազմական խաղում»: 2002թ., երբ արդեն ակներև էր իրաքյան գալիք պատերազմը, Գարդիները՝ որպես անհատ քաղաքացի, նախաձեռնեց հերթական «պատերազմական խաղը», որն ի ցույց էր դնում Բաղդադի անկումից հետո երևան եկող իրավիճակը՝ ամերիկյան ուժերի առջև ծառացող դժվարությունները, խնդիրները: Ըստ էության, հենց Սեմ Գարդիներն է հանդիսանում Իրանի նկատմամբ հավանական ռազմական գործողության սկսման «*The Atlantic Monthly*»-ում հրապարակված սցենարի (նախագծի) հեղինակը:

Դեյվիդ Քեյ (*David Kay*)՝ 1991թ. Ծոցի պատերազմից հետո ԱԷՄԳ և ՄԱԿ Հատուկ հանձնաժողովի[2] միջուկային զենքի գծով տեսուչների խմբի[3] ղեկավար: 2003թ. հունիսին՝ Իրաքի 2003թ. պատերազմի ավարտից հետո, վերադարձավ Իրաք՝ շարունակելու իր առաքելությունը: Հետագայում Դեյվիդ Քեյը եզրակացրեց, որ 2003թ. պատերազմի նախօրեին Իրաքի տարածքում միջուկային զենք գոյություն չուներ, և ս.թ. հունվարին հրաժարական տվեց իր այդ պաշտոնից: «Պատերազմական խաղում» հանդես է գալիս որպես ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ)[4] տնօրեն:

Քենեթ Փոլաք (*Kenneth Pollack*)՝ աշխատում է Բրուքինգզ հաստատությունում (*Brookings Institution*): Քենեթ Փոլաքը յոթ տարի աշխատել է ԿՀՎ-ում՝ որպես Իրանի և Իրաքի գծով վերլուծաբան: Այնուհետև՝ 1998-2000թթ. ընթացքում՝ Բիլ Քլինթոնի (*Bill Clinton*) նախագահության վերջին երկու տարիներին, զբաղեցրել է ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ)[5] Պարսից ծոցի բաժնի տնօրենի պաշտոնը: 2002թ. հրատարակվել է Փոլաքի «Սպառնացող փոթորիկ. Իրաք ներխուժման պատճառը» («*The Threatening Storm: The Case for Invading Iraq*») գիրքը, ուր հեղինակը նախազգուշացնում էր Սադամ Հուսեյնի ենթակայության ներքո գտնվող ԶՈԶ վտանգի մասին:

---

[1] Ամերիկացիները 2003թ. իրաքյան պատերազմը կոչում են «Իրաքի ազատության գործողություն» (*Operation Iraqi Freedom, OIF*):

[2] *United Nations Special Commission (UNSCOM):*

[3] Խմբի գործունեության նպատակն էր պարզել, թե արդյոք Իրաքն ունի միջուկային զենք:

[4] *Central Intelligence Agency (CIA):*

[5] *National Security Council (NSC):*

«Պատերազմական խաղում» հանդես է գալիս որպես ԱՄՆ պետքարտուղար՝ ներկայացնելով դեմոկրատների տեսակետը:

Ռյուել Մարք Ջերեչթ (*Reuel Marc Gerecht*)՝ աշխատում է Ամերիկյան նախաձեռնությունների ինստիտուտում (*American Enterprise Institute*): Ռյուել Մարք Ջերեչթը ինը տարի աշխատել է ԿՀՎ Գործողությունների տնօրինությունում[1], ուր Մերձավոր Արևելքի գծով հավաքագրում էր գործակալներ: 1997թ. Ջերեչթը Էդվարդ Շիրլի (*Edward Shirley*) կեղծանունով հրատարակեց «Ճանաչի՛ր քո թշնամուն. լրտեսի ճանապարհորդությունը հեղափոխական Իրանում» («*Know Thine Enemy: A Spy's Journey Into Revolutionary Iran*») գիրքը, որտեղ նկարագրված է վերջինիս գաղտնի ուղևորությունը Իրան: «Պատերազմական խաղում» հանդես է գալիս որպես ԱՄՆ պետքարտուղար՝ ներկայացնելով հանրապետականների տեսակետը:

Մայքլ Մազար (*Michael Mazarr*)՝ ազգային անվտանգության գծով ռազմավարության պրոֆեսոր ԱՄՆ Ազգային ռազմական քոլեջում: Հեղինակել է Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ մի շարք աշխատություններ: Համագործակցել է Սեմ Գարդիների հետ անցած «պատերազմական խաղերում»: «Պատերազմական խաղում» հանդես է գալիս որպես ԱՄՆ պաշտպանության նախարար:

«Պատերազմական խաղը» տեսագրվել և այնուհետև, քննարկումների նպատակով, ցուցադրվել է Գրահամ Էլիսոնին (*Graham Allison*)՝ որպես նախագահական որոշումների ընդունման մեխանիզմի առաջատար մասնագետ աշխատում է Հարվարդի համալսարանի Քենեդիի անվան կառավարման դպրոցում (*Harvard University's Kennedy School of Government*), Թոմաս Համեսին (*Thomas X. Hammes*)՝ ծովային հետևակի գնդապետ՝ մասնագիտացած է ապստամբությունների ճնշման ոլորտում, Դոնալդ Վանդերգրիֆին (*Donald Vandergriff*)՝ մայոր, զբաղված է բանակի ներքին կուլտուրայի բարեփոխման ուսումնասիրությամբ, և Հերբերտ Սթրիներին (*Herbert Striner*)՝ ԱՄՆ բանակի վերլուծական կենտրոններից մեկում՝ «Գործողությունների հետազոտման կազմակերպությունում» («*Operations Research Organization*») ղեկավարում է «պատերազմական խաղեր» նախագծող խմբի աշխատանքները:

[1] CIA's Directorate of Operations:

Հավելված № 2

ԱՄՆ զինուժի մարտական գործողությունների ծավալման նախագծման հայեցակարգային զարգացումների շուրջ

Իրանի նկատմամբ հավանական ռազմական գործողության նախագիծը (սցենարը) ստացվել է ամերիկյան զինուժի նախորդ ռազմական գործողությունների մոդելավորումների ընդհանրացման արդյունքում: Որպես հայեցակարգային նախատիպ են վերցված ռազմական գործողությունների վարման երեք սցենարներ.

- գեներացված սկիզբ (*Generated start*)[1]. 90 օր՝ զինուժի նախապատրաստման և խմբավորման ստեղծման (ենթակառուցվածքի ստեղծում) վրա, 45 օր՝ օդային հարվածներ, 90 օր՝ ցամաքային գործողություններ, իրավիճակի կայունացման գործողություններ՝ անորոշ ժամանակով,
- արագացված սկիզբ (*Running start*)[2]. 45 օր՝ զինուժի նախապատրաստման և խմբավորման ստեղծման (ենթակառուցվածքի ստեղծում) վրա, 90 օր՝ օդային հարվածներ, 90 օր՝ ցամաքային գործողություններ, իրավիճակի կայունացման գործողություններ՝ անորոշ ժամանակով,
- հիբրիդ (*Hybrid*)[3]. 30 օր՝ զինուժի նախապատրաստման և խմբավորման ստեղծման (ենթակառուցվածքի ստեղծում) վրա, 14 օր՝ օդային հարվածներ, 90 օր՝ ցամաքային գործողություններ, իրավիճակի կայունացման գործողություններ՝ անորոշ ժամանակով:

Եվ վերջապես, այդ ամենի հիմքի վրա ներկայացվել է Իրանի նկատմամբ հավանական ռազմական գործողության «Ռազմավարական անակնկալ» (*Strategic surprise*) նախագիծը. 20 օր՝ զինուժի նախապատրաստման և խմբավորման ստեղծման (ենթակառուցվածքի ստեղծում) վրա և 30 օր՝ օդային հարձակումներ ու ցամաքային գործողություններ *(ընդհանուր առմամբ 50 օր)*, իրավիճակի կայունացման գործողությունը բացակայում է:

---

[1] Հին հայեցակարգ է, կիրառվել է Երկրորդ աշխարհամարտի ժամանակ՝ 1944թ. հունիսի 6-ին (այսպես կոչված *D-day*), դաշնակից զորքերի կողմից Նորմանդիայում (Ֆրանսիա) իրականացված ափհանման գործողության (դեսանտային գործողություն) ժամանակ:

[2] «Իրաքի ազատության գործողության» (*OIF*)՝ 2003թ. իրաքյան պատերազմի հայեցակարգային առաջին տարբերակն է:

[3] «Իրաքի ազատության գործողության» (*OIF*)՝ 2003թ. իրաքյան պատերազմի հայեցակարգային երկրորդ տարբերակն է:

Ռազմական գործողությունների վարման սցենարները

«Գեներացված սկիզբ» (**«*Generated start*»**)	ենթակառուցվածքի ստեղծում	օդային հարվածներ	ցամաքային գործողություններ	**225 օր**	կայունացման գործողություններ
	90 օր	45 օր	90 օր		անորոշ ժամանակով
«Արագացված սկիզբ» (**«*Running start*»**)	ենթակառուցվածքի ստեղծում	օդային հարվածներ	ցամաքային գործողություններ	**225 օր**	կայունացման գործողություններ
	45 օր	90 օր	90 օր		անորոշ ժամանակով
«Հիբրիդ» (**«*Hybrid*»**)	ենթակառուցվածքի ստեղծում	օդային հարվածներ	ցամաքային գործողություններ	**134 օր**	կայունացման գործողություններ
	30 օր	14 օր	90 օր		անորոշ ժամանակով
«Ռազմավարական անակնկալ» (**«*Strategic surprise*»**)	ենթակառուցվածքի ստեղծում	օդային հարվածներ	ցամաքային գործողություններ	**50 օր**	կայունացման գործողությունները սահմանափակ են կամ բացակայում են
	20 օր	30 օր			- - - -

Իրան. «Ռազմավարական անակնկալի» գծագրային պատկերը



Հավելված № 3

Իրանի հետ կապված ԱՄՆ պաշտպանության նախարարի ծրագրավորումների շուրջ. համառոտ պատկեր

- Լիազորում է Իրանի տարածքում սկսել հատուկ նշանակության գործողություններ,
- համակարգելով ջանքերն ԱՄՆ պետքարտուղարի հետ՝ Ադրբեջանի, Վրաստանի և Իրաքի հետ սկսում է բանակցություններ,
- առաջիկա վեց ամիսների ընթացքում նախագծելու է Իրանի դեմ հավանական ռազմական գործողության ծրագիրը, որի նպատակն է ԱՄՆ նախագահի համար ապահովել Իրանի նկատմամբ ռազմական գործողության *ընտրությունը,*
- ծրագրի օբյեկտներն են հանդիսանալու՝
  - ✓ ԻՀՊԿ զորամիավորումներին հարված հասցնելը,
  - ✓ ԶՈԶ արտադրության Իրանի կարողություններին և ԶՈԶ-ի հետ առնչվող իրանական սարքավորումներին էական վնաս հասցնելը,
  - ✓ իրանական վարչակարգի փոփոխությունը,
  - ✓ Իրանում կայունացման *սահմանափակ* գործողությունների անցկացումը։

Հավելված № 4

Տեղեկատվական գործողությունների շուրջ

Ըստ նախագծի, Իրանի նկատմամբ ռազմավարական տեղեկատվական գործողությունների առաջին փուլը («հիմքի ստեղծում») պետք է *սկսվի (ձեռնարկվի)* Սպիտակ տան Գլոբալ տեղեկատվությունների գրասենյակի[1] կողմից: Այնուհետև, ԱՄՆ Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ)[2] երկրորդ («ամերիկյան մոտեցման օժանդակության ընդլայնում Միացյալ Նահանգներում և արտերկրում») և երրորդ («ժամանակը եկել է») փուլերում պետք է *համակարգի* տեղեկատվական գործողությունների *բաղկացուցիչ մասերը՝ դետալները*:

Նշվում է, որ Իրանի նկատմամբ տեղեկատվական գործողությունների *առաջին փուլում* Սպիտակ տան Գլոբալ տեղեկատվությունների գրասենյակը պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

- թողարկել օրական գլոբալ հաղորդագրություններ («*Daily Global Message*»),
- Իրանի վերաբերյալ հատուկ նյութեր պատրաստել («*White Papers on Iran*»),
- կոորդինացիոն աշխատանք տանել վերլուծական կենտրոնների հետ,
- արտաքին քաղաքականությունը լուսաբանող ազդեցիկ լրատվամիջոցների լրագրողների հետ կազմակերպել հարցազրույցներ,
- աշխատանք տանել կոնգրեսական առաջնորդների հետ:

Պետքարտուղարության և պաշտպանության նախարարության նախարարներն ու փոխնախարարները պետք է իրենց ուշադրությունը բևեռեն հետևյալ միավորների վրա.

- ԱՄՆ ռազմական անձնակազմ,
- արտաքին քաղաքական ազդեցիկ կազմակերպություններ,
- արտերկիր՝
  - ✓ արտաքին քաղաքական գլխավոր կազմակերպություններ,
  - ✓ ԶԼՄ,
- ՆԱՏՕ,
- Մեծ ութնյակ (*G-8*):

ԱՄՆ զինուժի Կենտրոնական հրամանատարության (*CENTCOM*) կողմից պետք է ամերիկյան զինված ուժերի պաշտոնյաներին ուղարկվեն հետևյալ հաղորդագրությունները՝

- Իրանը ստեղծում և զարգացնում է ՋՈՋ,
- Իրանը չի հարգում իր պայմանագրային պարտավորությունները,

---

[1] White House Office of Global Communications (WHOGC):
[2] National Security Council (NSC):

- Իրանն ակտիվորեն ներգրավված է ահաբեկչության մեջ,
- Իրանը ձգտում է կործանել ժողովրդավարությունն Իրաքում,
- Իրանը վտանգ է ներկայացնում տարածաշրջանի համար։

Իրանական զինված ուժերին պետք է ուղարկվեն տեղեկատվական գործողությունների հետևյալ հաղորդագրությունները.

- «դուք նետված եք բախտի քմահաճույքին (անպաշտպան եք)»,
- «ցանկացած ուղղությամբ և ցանկացած ժամանակ մահաբեր ուժը կարող է հասնել ձեզ»։

Պետք է ուղարկվեն գաղտնի հաղորդագրություններ.

- Միացյալ Նահանգները չի կարող համակերպվել միջուկային զենք ունեցող Իրանի հետ,
- Իրանի ներգրավվածությունը Իրաքում պետք է դադարեցվի։

Հավելված № 5

Իրանական հակաօդային պաշտպանության S-400 համակարգերի տեղակայման հավանական վայրերը[1]



[1] Ըստ ամերիկյան աղբյուրների, իրանական հակաօդային պաշտպանության S-400 համակարգերի (արտադրվել են Ռուսաստանում) հարվածային կամ պաշտպանական շառավիղը 400 կմ է:

Հավելված № 6

Ամերիկյան օդուժի կողմից ադրբեջանական օդանավակայանների հավանական օգտագործման գծապատկերը